# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

**ՈՐՈՇՈՒՄ N 152-Ա**

**«02» ՕԳՈՍՏՈՍ 2023Թ.**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 96-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2022 թվականի նոյեմբերի 30-ի N 3245-Ա հրամանը՝

**Որոշում եմ**

1. Հաստատել 2023 թվականի երրորդ եռամսյակի ընթացքում Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքում իրականացվելիք իրավական և մասնագիտական հսկողության բնագավառները, ժամանակահատվածը և հսկողություն իրականացնող աշխատանքային խմբի կազմը՝ համաձայն սույն որոշման հավելվածի:

2. Իրավական և մասնագիտական հսկողության իրականացման գործընթացում ղեկավարվել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի ապրիլի 9-ի N 03 հրամանով հաստատված հարցաշարով:

3. Անհրաժեշտության դեպքում իրավական և մասնագիտական հսկողության աշխատանքային խմբում ներգրավել մարզպետի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների այլ մասնագետների:

4. Մասնագիտական հսկողություն իրականացնելիս անհրաժեշտություն առաջանալու դեպքում աշխատանքային խմբում ներգրավել նաև մասնագիտական որակավորում ունեցող այլ անձանց (համաձայնությամբ):

5. Աշխատանքային խմբի ղեկավարին՝ իրավական և մասնագիտական հսկողություն իրականացնելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում, իրավական հսկողության բարձրագույն մարմնի կողմից հաստատված օրինակելի ձևին համապատասխան կազմել արձանագրություն:

6. Մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարին՝ հսկողություն իրականացնելուց հետո մեկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ներկայացնել իրականացված իրավական և մասնագիտական հսկողության արդյունքում կազմված արձանագրությունները:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

8/2/2023

X

ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Подписано: GRIGORYAN ARARAT 1310850550

**Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

**ք. Եղեգնաձոր**

Հավելված
ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2023
թվականի օգոստոսի 02-ի թիվ 152 որոշման

**2023 թվականի երրորդ եռամսյակում Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքում իրականացվելիք իրավական և մասնագիտական հսկողության բնագավառները, ժամանակահատվածը և հսկողություն իրականացնող աշխատանքային խմբի կազմը**

| հ/հ | Համայնքի անվանում | Իրականացվելիք իրավական և մասնագիտական հսկողության ժամանակահատվածը | Իրականացվելիք իրավական և մասնագիտական հսկողության բնագավառ | Իրավական և մասնագիտական հսկողություն իրականացնող պաշտոնատար անձիք | |
|---|---|---|---|---|---|
| | | | | Զբաղեցրած պաշտոն (աշխատանքային խմբի ղեկավար, անդամ) | Անուն, ազգանուն |
| 3-րդ եռամսյակ | | | | | |
| 1 | Վայք | 07.08.2023թ.- 18.08.2023թ. | Տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների բնագավառ | ՏԿ և ՏԻ հարցերի վարչության պետ՝ աշխատանքային խմբի ղեկավար | Աղվան Հարությունյան |
| | | | | Առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության գլխավոր մասնագետ՝ աշխատանքային խմբի անդամ | Ցողիկ Բաբայան |
| | | | | Առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության ավագ մասնագետ՝ աշխատանքային խմբի անդամ | Լյուսյա Պողոսյան |
| | | | | Ջրահավաքային | Վանիկ Խուդավերդյան |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | նախապատրաստության բաժնի պետ՝ աշխատանքային խմբի անդամ | |
| | | | | Քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության հողաշինության բաժնի ավագ մասնագետ՝ աշխատանքային խմբի անդամ | Սմբատ Խլխաթյան |
| | | | | Գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության գլխավոր մասնագետ՝ աշխատանքային խմբի անդամ | Գոհար Խաչատրյան |
| | | | | ՓԾ Վայոց ձորի մարզային փրկարարական վարչության բնակչության պաշտպանության բաժնի պետ՝ աշխատանքային խմբի անդամ | Վարդան Գրիգորյան |
| | | | | Զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի պետ՝ աշխատանքային խմբի անդամ | Արամ Կոստանյան |
| | | | | Ֆինանսական վարչության գլխավոր մասնագետ՝ աշխատանքային խմբի անդամ | Անահիտ Սարգսյան |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | Կրթության, մշակույթի և սպորտի վարչության ավագ մասնագետ՝ աշխատանքային խմբի անդամ | Լուսինե Հարությունյան |
| | | | | Կրթության, մշակույթի և սպորտի վարչության փորձագետ | Աղասի Հովհաննիսյան |
| | | | | Առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության գլխավոր մասնագետ՝ խմբի անդամ | Լիլիա Կարապետյան |
| | | | | Քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության գլխավոր մասնագետ՝ աշխատանքային խմբի անդամ | Սամվել Հովսեփյան |
| | | | | Քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության գլխավոր մասնագետ՝ աշխատանքային խմբի անդամ | Խաչիկ Ասլանյան |
| | | | | Իրավաբանական բաժնի պետ՝ աշխատանքային խմբի անդամ | Նարինե Մաղաքյան |